



ԵՐԵՎԱՆԻ Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ ЯЗЫКОВ И СОЦИАЛЬНЫХ
НАУК

ИМЕНИ В. БРЮСОВА
YEREVAN "BRYUSOV" STATE UNIVERSITY OF
LANGUAGES AND SOCIAL SCIENCES

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ
ԼԻՆԳՎԱ
2015

Գլխավոր խմբագիր՝ Գ. Գասպարյան, բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

- L. Հովհաննիսյան, բանասիրական գիտությունների դոկտոր
 - L. Հովսեփյան, բանասիրական գիտությունների դոկտոր
 - Գ. Գևորգյան, բանասիրական գիտությունների դոկտոր
 - Հ. Պետրոսյան, մանկավարժական գիտությունների դոկտոր
 - Դ. Գյուրջինյան, բանասիրական գիտությունների թեկնածու
 - Ն. Հեքեքյան, բանասիրական գիտությունների թեկնածու
 - Ս. Տիոյան, բանասիրական գիտությունների թեկնածու
 - Ա. Ղուկասյան, բանասիրական գիտությունների թեկնածու
 - Ա. Հակոբջանյան, բանասիրական գիտությունների թեկնածու
 - Գ. Վարդանյան, բանասիրական գիտությունների թեկնածու
 - Ռ. Դոխոյան, բանասիրական գիտությունների թեկնածու
- Տեխնիկական խմբագիր՝ Հասմիկ Փիլավճյան

Главный редактор: Г. Гаспарян, доктор филологических наук, профессор

Редакционная коллегия:

- Л. Оганесян, доктор филологических наук
 - Л. Овсебян, доктор филологических наук
 - Г. Геворкян, доктор филологических наук
 - Г. Петросян, доктор педагогических наук
 - Д. Гюрджинян, кандидат филологических наук
 - Н. Экекян, кандидат филологических наук
 - С. Тиоян, кандидат филологических наук
 - А. Гукасян, кандидат филологических наук
 - А. Акобджанян, кандидат филологических наук
 - Г. Варданян, кандидат филологических наук
 - Р. Дохоян, кандидат филологических наук
- Технический редактор: Асмик Пилавджян

Editor-in-Chief – G. Gasparyan, Doctor in Philology, Professor

Editorial Board:

- L. Hovhannisyanyan, Doctor in Philology
 - L. Hovsepnyan, Doctor in Philology
 - G. Gevorgyan, Doctor in Philology
 - H. Petrosyan, Doctor in Pedagogy
 - D. Gyurjinyan, Ph.D
 - N. Hekekyan, Ph.D
 - S. Tioyan, Ph.D
 - A. Ghukasyan, Ph.D
 - A. Hakobjanyan, Ph.D
 - G. Vardanyan, Ph.D
 - R. Dokhoyan, Ph.D
- Technical Editor – Hasmik Pilavjyan

ՀՏԴ 061.3:80
ԳՄԴ 80
< 316

Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու/
< 316 Երևանի Վ. Բյուրաչի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան.- Եր.: Լինգվա, 2015 թ.- 222 էջ:

ՀՏԴ 061.3:80
ԳՄԴ 80

ISBN 978-9939-56-130-1

© Լինգվա, 2015

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ՝ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Հիմնաբառեր՝ թարգմանություն, տողացի, չափածո և արձակ, լեզվամտածողություն, բնագիր, համարժեք, ազգային ոգի և հայացք, գրական ըմբռնումներ, ժողովրդական բանահյուսություն, պատկերային համակարգ, ճշգրտություն:

Թումանյանի գրական գանձարանում իր ուրույն և հաստատուն տեղն ունի թարգմանությունը. սկսած 1880-ական թվականներից մինչև իր կյանքի վերջը՝ ավելի քան երեսուն տարի, մեծ կամ փոքր հաճախականությամբ նա զբաղվել է արձակ ու չափածո թարգմանություններով: Դրանց տեսակարար կշիռը Թումանյանի գեղարվեստական արձակում կազմում է գրողի կենդանության օրոք լույս տեսած արձակ գործերի ծավալի շուրջ կեսը¹, որոնց անդրադարձել են անխտիր բոլոր հայտնի թումանյանագետները՝ Ա. Տերտերյանից մինչև Մ. Ջանիդլադյան, Էդ. Ջրբաշյան, Հ. Թամրազյան, Լ. Հախվերդյան և շատ ուրիշներ (այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի Թումանյանագիտության բաժինը), որոնք կա՛մ կոնկրետ որևէ գործի, կա՛մ հեղինակի, կա՛մ էլ մասամբ այլ հարցերի ուսումնասիրության համատեքստում են դիտարկել թարգմանության հարցերը: Մինչդեռ առանձին ուսումնասիրություն՝ միայն թումանյանական թարգմանական հարցերն արձարծող, չկա (բացառություն է կազմում Հ. Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի տասհատորյակի երկրորդ՝ «Քառյակներ, բալլադներ, թարգմանություններ» հատորում վեց էջով ներկայացվող մասը, որն ամփոփ ու հակիրճ, բայց գրականագիտական խոր վերլուծությամբ ներկայացնում է թումանյանական թարգմանությունները)²:

2012 թվականին լույս տեսավ Հ. Թումանյանի թոռնուհու՝ Իրմա Սաֆրազբեկյանի կազմած «Հովհաննես Թումանյան»

¹ Հ. Թումանյան, հտ. 2, Ե., 1990, էջ 575:

² Տե՛ս Հ. Թումանյան, նշվ. աշխ., էջ 575-586:

Թարգմանություններ և փոխադրություններ» գիրքը³, որտեղ մեկտեղված են Թումանյանի կողմից կատարված բոլոր թարգմանությունները՝ բանաստեղծություններ (այդ թվում՝ մանկական), պոեմներ, վիպերգեր, պատմվածքներ (թվով 83), սա երբևէ հրատարակվածների ստույգ և ամփոփ ցանկն է, քանի որ հեղինակի տնօրինության տակ է նաև ընտանեկան արխիվը: Հենց այս գիրքն էլ առիթ դարձավ մեր սույն աշխատանքի:

«Շատ բազմազան է Հ. Թումանյանի թարգմանած երկերի ազգային աշխարհագրական «քարտեզը», - կարդում ենք Երկերի երկրորդ հատորում, - այստեղ ներկայացված են համաշխարհային գրականության շատ դեմքեր... Հետաքրքիր է նաև Թումանյանի կատարած ընտրողական մոտեցումը. Թումանյան թարգմանիչը չի սիրում կենտրոնանալ որևէ հեղինակի կամ նրա ստեղծագործությունից հայացնել մեծ թվով երկեր կամ ամբողջական շարքեր: Նա սովորաբար բավարարվում է մեկ կամ մի քանի բնորոշ ստեղծագործություններով, որոնց թարգմանությամբ հայ ընթերցողին է ներկայացնում և՛ տվյալ հեղինակի գեղարվեստական աշխարհի որոշ ցայտուն գծեր, և՛ իր սեփական ըմբռնումը նրա մասին»⁴: Նույնիսկ Պուշկինից ու Լերմոնտովից, որոնց սերն ուղեկցել է Թումանյանին ամբողջ գիտակից կյանքի ընթացքում, նա թարգմանել է **յոթ և երեք** բանաստեղծություն՝ համապատասխանաբար, և մեկ պոեմ Լերմոնտովից:

Ընդ որում՝ Պուշկինի «Ազատություն» ներբողից ընդամենը մեկ քառատող է թարգմանել.

Արում եմ քեզ և քո գահը,

Միահեծան գոռոզ ցար,

Եվ քո որդոց ու քո մահը

Պիտի տեսնեմ անպայման:

Վ. Գյոթեից թարգմանել է երկու բանաստեղծություն՝ «Վարդն» ու «Լերանց լանջերը»:

³ Հ. Թումանյան, Թարգմանություններ և փոխադրություններ, Ե., 2012:

⁴ Տե՛ս Հ. Թումանյան, հտ. 2, էջ 577:

Իսկ ի՞նչ լեզուներից է Թումանյանը թարգմանություններ կատարել: Հայտնի է, որ նա, մայրենի լեզվից բացի, լիարժեքորեն տիրապետել է միայն ռուսերենին. փաստորեն թարգմանությունները եղել են կա՛մ ռուսերենից, կա՛մ ռուսերենի միջոցով՝ միջնորդաբար (երբեմն նա դիմել է այլ օտար լեզուների գիտակ ընկերների օգնությանը՝ օգտվելով նրանց կատարած տողացիներից): Սակայն ստույգ տեղեկություններ, թե ինչ չափով և ինչպես է Թումանյանն օգտվել ռուսերենից ու տողացիներից, չկան⁵: Ինչևէ, մենք ունենք թումանյանական թարգմանությունների ճոխ ընտրանի, որոնցից մի քանիսին կանդրադառնանք մեր այս ուսումնասիրության մեջ:

Մեզանից քչերը կարող են մտաբերել, թե որ հասակից են սկսել սիրել իրենց նախընտրած հայ բանաստեղծներին՝ Ավ. Իսահակյանին, Վ. Տերյանին, Ե. Չարենցին, Պ. Սևակին, Համո Սահյանին ...: Կարծում եմ գրաճանաչ լինելուց հետո միայն: Իսկ Թումանյանին՝ արդեն երկուսից երեք տարեկանում՝ չիմանալով բնականաբար, որ դրանք Թումանյանի կատարած թարգմանություններն են (անհայտ հեղինակներից)⁶: Երեխաները դեռ մանկապարտեզում են սովորում «Շունը» բանաստեղծությունը, որ նաև երգ է դարձել. այս բանաստեղծության հետ նույն շարքում են «Առաջին ձյունը», «Փիսիկի գանգատը», «Մարտ», «Ծիտիկի օրորը» (վերջինս մայրիկներն են երգում փոքրիկներին քնեցնելիս) և մյուսները: Առաջին դասարանում սովորում են «Գրիչ»-ը.

*Ի՞նչ կլինի, ասա, գրիչ,
Ինձ էլ սիրես գոնե մի քիչ...
Ինչու՞ իմ մեծ քրոջ ձեռքին
Գրում ես միշտ վարժ ու կարգին,
Իսկ իմ ձեռքին խազմըզում ես
Սև ազոավի ճանկերի պես*

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 579:

⁶ Տե՛ս Հ. Թումանյան, Թարգմանություններ և փոխադրություններ, էջ 80-104:

Երկրորդ դասարանում սովորում են «Աշուն» (այն ռոմանս է դարձել) և «Տերևաթափ» բանաստեղծությունները՝ դարձյալ չիմանալով, որ դրանք թարգմանություններ են՝ Թումանյանի կողմից կատարված:

Թումանյանի մյուս՝ «Ձմեռվա իրիկունը» բանաստեղծությանը անդրադարձել են շատերը և բազմիցս:

Էդ. Զրբաշյանն իր «Պուշկինը և հայ բանաստեղծները» գրքում⁷, Պուշկինի և Թումանյանի պոեզիան համադրելով տիպաբանական ընդհանրության սկզբունքով, փաստում է, որ Թումանյանը այնպիսի մի երևույթ է, որին հայ գրականության մեջ շատ կողմերով վիճակվել է կատարելու այն դերը, որ Ռուսաստանում կատարել է Պուշկինը: Այդ ընդհանրությունը երևան է եկել ազգային ոգու և հայացքի, գրական ըմբռնումների, դեպի ժողովրդական բանահյուսությունն ունեցած վերաբերմունքի, ինչպես նաև գեղարվեստական ոճի որոշ կողմերի ընդհանրությամբ: Այդ զուգահեռը ոչ թե ազդեցության հետևանք է, այլ ուղղակի բխում է ազգային ժողովրդական բանաստեղծի գրական - պատմական մեծ առաքելությունից, որը ռուս գրականության մեջ բաժին ընկավ Պուշկինին, իսկ հայ գրականության մեջ՝ Թումանյանին: Նշված գծերով ու առաքելությամբ օժտված Թումանյանն էլ «երկնեց» «Ձմեռվա իրիկունը», որը Հենրիկ Հովհաննիսյանը, իրավամբ անվանելով հայ թարգմանական արվեստի գագաթը⁸, շարունակում է, որ Թումանյանի առաջին թարգմանության («Եթե իրավ է, որ գիշերները...») և «Ձմեռվա իրիկունի» միջև ոչ միայն որակական մեծ տարբերություն կա, այլև երկու տասնամյակ, որի ընթացքում Թումանյանը գտել է այն տոնայնությունն ու չափը, որ հատուկ լինելով հայ ոտանավորին, հարազատ էր լինելու նաև ռուսականին ու եվրոպականին: Թումանյանի պատկերային համակարգը, սակայն, տարբեր է ստեղծում է այլ մթնոլորտ ու տրամադրություն, որ, իհարկե, ռուսական է: Թումանյանը պուշկինյան ոտանավորը ենթարկել է իր խոհին ու ապրումին,

⁷ Էդ. Զրբաշյան, Պուշկինը և հայ բանաստեղծները, Ե., 1999, էջ 121:

⁸ Ա. Պուշկին / Henrik Hovhannissyan կայքէջ:

տարել իր ներշնչումների աշխարհը: Թումանյանի իսկ բնորոշմամբ՝ այդ «գոհարը ռուս գրականության մեջ» նա հեշտ չի ստեղծել. բերենք վերջին տարբերակներից մի քանի տող⁹.

Հողմը ամպով երկինքն առնում

Հողմը մեզով երկինքն առնում

Պարկում է բուքը ձյան,

Փալարում է բուքը ձյան,

Մերթ մանկան պես լաց լինում,

Մին՝ մանկան պես լաց է լինում,

Եվ մերթ ոռնում զերթ գազան

Մերթ ոռնում է զերթ գազան

Սա աշխատանքային տարբերակի բնագիրն է, որից մի փոքրիկ հատված մենք պատճենել ենք Դսեղում գործող Թումանյանի տուն-թանգարանում: Այն ամբողջությամբ հրատարակելու իրավունք չունենք առանց թանգարանի տնօրենության թույլտվության:

Այս բանաստեղծությունը մենք անգիր ենք արել դեռևս դպրոցում՝ համարելով այն Թումանյանի գործը՝ չկասկածելով, թե թարգմանություն է: Հետագայում, անշուշտ, դա ըմբռնեցինք:

Թումանյանի թարգմանությունները մտածել են տալիս, թե բանաստեղծության որ շերտերն են թարգմանելի, ինչը ինչով փոխարինել. արդյոք բառը բառային համարժեքով ...

1909 թվականի փետրվարի 28-ին Թումանյանի ավագ որդին՝ Մուշեղ Թումանյանը, նամակով քրոջը՝ Աշխենին, երկու բանաստեղծություն է ուղարկում, որ նա որոշի՝ լա՞վն են, թե՞ ոչ (գրում էր Թիֆլիսի հայտնի Մետեխի բանտից, որտեղ հոր հետ ձերբակալված էին հանրահայտ «Դաշնակցական գործով»): Առաջինը Թումանյանը գրել է իր քառասունամյակի օրը, իսկ երկրորդը թարգմանել է ռուսերենից ու դրանից լավ ու հանգիստ զգացել՝ ըստ որդու վկայման. այն ռուս բանաստեղծ Կորսակի «В кусте ароматной сирени» բանաստեղծությունն է: Առաջինը Թումանյանն անվանել է «**Վայրէջք**».

⁹ Տե՛ս Հ. Թումանյան, հտ. 2, էջ 466:

Քառասուն տարի բռնած ճանապարհ
Շիտակ, անվեհեր
Գընում եմ ես վեր-
Դեպ Անհայտը սուրբ, աշխարհքը պայծառ:

Քառասուն տարի ճամփովն ահարկու
Անցել եմ էսպես
Ու հասել եմ ես,
Խաղաղությանն եմ հասել ես հոգու:

Թողել եմ ներքև, մեծ լերան տակին,
Ե՛վ փառքը, և՛ գանձ,
Ե՛վ քեն, և՛ նախանձ-
Ամենը, ինչ որ ճնշում է հոգին:

Եվ էն ամենը, արդ նայում եմ ես-
Տեսնում եմ նորից
Իմ լերան ծերից-
Էնպես հասարակ, դատարկ են՝ էնպես:

Եվ ես իմաստուն ու բեռըս թեթև,
Անհոգ ծիծաղով
Երգով ու տաղով
Իջնում եմ զըվարթ իմ լերան ելու:

Իսկ սա Կորսակի «В кусте ароматной сирени» բանաստեղծության թարգմանությունն է, որի մասին Մուշեղը գրել է նամակում. «Էս ոտանավորը օրիգինալից լավն է»¹⁰:

Ամբողջ գիշերը խոսեց անդադար
Սոխակն հասմիկի թրփում բուրավետ,
Ու հենց արշալույս բացվեց ոսկեվառ,
Թըռավ առաջին պայծառ շողի հետ:

¹⁰ Թումանյանի ընտանիքի նամականին, էջ 16-17:

Ողբում են հակված ճյուղերը թափուր
Անցած գնացած ժամերն անըման,
Մով ծաղիկներից թափվում են լուռ-լուռ
Գոհար ցողերը՝ արցունքն անջարման:

Վ. Գյոթեից Թումանյանը թարգմանել է, ինչպես վերը նշեցինք, երկու բանաստեղծություն՝ «Վարդն» ու «Լերանց լանջերը»: Վերջինս մի փոքրիկ, գողտրիկ գործ է.

Լերանց լանջերը
Նիրհում են մըթում,
Խաղաղ մարգերը մըշուշ է պապում.
Ճամփեն հանդարտվել,
Չի շարժվում քամի,
Ուր որ է դու էլ
Կըքընես հիմի: (1917թ.)

Իսկ «Վարդը» նախ ուզում ենք ներկայացնել բնագրով՝ գերմաներենով, ու դրա տողացի թարգմանությամբ:

Heidenroslein

Մարգագետնի փոքրիկ վարդը

Sah ein Knab' ein Röslein stehn,

Մի փոքրիկ տղա տեսավ մի փոքրիկ վարդ.

Röslein auf der Heiden,

Փոքրիկ վարդը մարգագետնում,

Was so jung und morgenschön,

Այնքան թարմ ու արփիագեղ էր,

Lief er schnelles nah zu sehen.

Արագ մոտ վազեց տեսնելու այն,

Sah's mit vielen Freuden.

Մեծ ուրախությամբ նայեց դրան:

Röslein, Röslein, Röslein rot,

Փոքրիկ վարդ, փոքրիկ վարդ, փոքրիկ կարմիր վարդ.

Röslein auf der Heiden.

Փոքրիկ վարդ մարգագետնում:

Knabe sprach: Ich steche dich,
Փոքրիկ տղան ասաց. Ես քեզ կքաղեն,
 Röslein auf der Heiden,
Փոքրիկ վարդ մարգագետնում:
 Röslein sprach: Ich steche dich,
Փոքրիկ վարդն ասաց. Ես քեզ կծակեմ,
 Dass du ewig denkst an mich,
Որ դու իմ մասին հավիտյան մտածես,
 Und ich will's nicht leiden.
Եվ ես դրա համար չեմ ցավի:
 Röslein, Röslein, Röslein rot,
Փոքրիկ վարդ, փոքրիկ վարդ, փոքրիկ կարմիր վարդ
 Röslein auf der Heiden.
Փոքրիկ վարդ մարգագետնում:
 Und der wilde Knabe brach's
Եվ վայրենի փոքրիկ տղան քաղեց
 Röslein auf der Heiden:
Փոքրիկ վարդը մարգագետնում:
 Röslein wehrte sich und stach,
Փոքրիկ վարդը դիմադրեց և ծակեց,
 Half ihr doch kein Weh und Ach,
Բայց նրան ոչ մի ախ ու վախ (ցավ ու ախ) չօգնեց,
 Musste es eben leiden.
Եվ նա տառապեց:
 Röslein, Röslein, Röslein rot,
Փոքրիկ վարդ, փոքրիկ վարդ, փոքրիկ կարմիր վարդ
 Röslein auf der Heiden.
Փոքրիկ վարդ մարգագետնում:

Թումանյանի «Վարդը» բոլորս գիտենք. այստեղ կբերենք երեք տներից միայն առաջինը՝ ցույց տալու թումանյանական թարգմանության «ներքին ծալքերը».

*Փոքրիկ տղան մի վարդ տեսավ,
 Տեսավ մի վարդ դաշտի միջին.*

*Վարդը տեսավ, ուրախացավ,
Մոտիկ վազեց սիրուն վարդին,
Սիրուն վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:*

Նշենք նաև, որ եթե բանաստեղծության երեք տների վերջին երկու տողերը գերմաներենում անփոփոխ կրկնվում են, ապա Թումանյանը, երեքում էլ մեկական բառ փոխելով, թարգմանել է՝

*Սիրուն վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:*

*Փըշոտ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:*

*Քնքուշ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:*

Նա այստեղ անգամ արևմտահայերեն քերականական ձևերի է դիմել՝ որ **չը մոռնաս** փըշոտ վարդին....

Թումանյանական չափածո թարգմանություններին (թվով 83) անդրադառնալու մղումը Թումանյանի և նրա կատարած տիտանական աշխատանքի հանդեպ մեր պարտքի հատուցման նվիրումից է բխում: Աշխատանքը, իհարկե, շարունակական է լինելու, քանզի թումանյանական անեզր աշխարհում դեռ կան լուսաբանման կարոտ բազմաթիվ էջեր:

Ի՞նչ եզրահանգման կարող ենք գալ թումանյանական թարգմանությունները ոչ թե (և ոչ միայն) թարգմանության իմաստային, տողացի կամ բառացի տարատեսակն են, այլ զուտ **թումանյանական** թարգմանության մի ուրույն տեսակ, որ մենք անվանել ենք մեկ բառով՝ **թումանյանական**. այս գործընթացում պարտադիր կարգով հաշվառված են հետևյալ գործոնները.

- ճշգրտություն ու հարազատություն՝ զուգակցված բանաստեղծության ազատության հետ,
- ազգային ոգու և հայացքի գիտակցում, հարազատ մթնոլորտի ու տրամադրության ստեղծում,

• ժողովրդի, ժամանակաշրջանի կենցաղի և դրա հետ կապված բոլոր հանգամանքների խորությամբ հասկացություն և ըմբռնում:

Քրականության ցանկ

1. Դերիկյան Վ., Թումանյանը և հայոց հոգևոր ավանդույթները, Ե., 2010:
2. Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հտ. 2, Ե., 1990:
3. Թումանյան Հովհ., Թարգմանություններ և փոխադրություններ, Ե., 2012:
4. Թումանյանի ընտանիքի նամականին, Կազմել և ծանոթագրել է Իրմա Սաֆրազբեկյանը, Ե., 2009:
5. Հախվերդյան Լ., Թումանյանի աշխարհը, Ե., 1966:
6. Մաճկալյան Ս., Թումանյանի հետ, Թումանյանով կամ, Ե., 2009:
7. Ջանփոլադյան Մ., Պուշկինի «բալլադները Թումանյանի թարգմանությամբ, համար 1, 1974:
8. Զրբաշյան Էդ., Պուշկինը և հայ բանաստեղծները, Ե., 1999:
9. Տերտերյան Ա., Հովհաննես Թումանյան. Հայրենի եզերքի քնարերգուն, 1911: